ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 47-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 02-Ի ԹԻՎ 10ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈ
ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի14-րդ հոդվածի 6-րդ մասի,համայնքի ավագանին որոշում է՝
Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024թվականի օգոստոսի 02-Ի Թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը.
1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը հաստատելու մասին
2.Հրատապ բաց մրցույթով գնման գործընթացի կազմակերպման վերաբերյալ
3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական տարածքում «Հատիսշին քոնսթրաքթ» ՍՊԸ -ի կողմից նախատեսվող աշխատանքների իրականացման վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին
4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական տարածքում «Վարդանյանշին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման նախագծի վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին
5.Ակունք համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարելու մասին
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 48-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի,«Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 8-րդ մասերի պահանջներով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը ,Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների/բնակավայրերի/քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 8-ի N2-8 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայասատանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 49-Լ

ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով,համաձայն «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 5-րդ մասի 23-րդ կետի 5-րդ ենթակետի, համայնքի ավագանին որոշում է.

1. Հայտարարել հրատապ մրցույթ 2024 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Ակունք համայնքի Ակունք բնակավայրի կոյուղու ցանցի կառուցում»աշխատանքների գնման ձեռք բերման համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 50-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՀԱՏԻՍՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ -Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի,հիմք ընդունելով 2024 թվականի հուլիսի 29-ին Ակունք համայնքում կայացած հանրային քննարկումների արձանագրությունը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական տարածքում Նոր գյուղ 1-ին փողոց 7 հասցեում«Հատիսշին քոնթրաքթս» ՍՊԸ-ի կողմից «Հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր մասնաշենքի կառուցում» նախատեսվող աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Ակունք բնակավայր *29.07.2024թ.*

Սույն թվականի հուլիսի 29-ին ժամը 11.00 ՀՀ Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանում՝ գյուղ Ակունք Կենտրոնական խճուղի 72 հասցեում, տեղի ունեցավ «ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊ ընկերության կողմից Նոր գյուղ բնակավայրի 1-ին փողոց 7 հասցեում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (առաջին հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին համայնքապետարանի, ձեռնարկողի՝ «ՀԱՏՇԻՆ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊ ՍՊԸ, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչներ և բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքն ասաց համայնքի ղեկավար Հունան Ռուբենյանը: Հ. Ռուբենյանը ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար, ներկայացրեց քննարկման առարկան, որից հետո խոսքը փոխանցեց ձեռնարկողի ներկայացուցիչ Արտակ Սարգսյանին:

Ա. Սարգսյանը ներկայացավ, հակիրճ ներկայացրեց նախատեսվող գործունեության բնույթը, ավելացրեց, որ շինարարության թույլտվության ստացումից հետո նախատեսվում է աշխատանքներն իրականացնել 2 փուլով:

Այնուհետև ելույթով հանդես եկավ «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Անի Բարսեղյանը:

Ա. Բարսեղյանը ներկայացավ, ներկայացրեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի դրույթները, նշելով, որ նախատեսվող գործունեությունը համարվում է «Բ» կատեգորիայի գործունեություն և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Այնուհետև Ա. Բարսեղյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության հետևանքով հնարավոր բնապահպանական ռիսկերը և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումները, նշեց, որ համապատասխան միջոցառումները կներարկայացվեն ՇՄԱԳ վերջնական հաշվետվության մեջ:

Համայնքի ղեկավար Հ. Ռուբենյանը նշեց, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է բնակելի թաղամասերից զգալի հեռավորության վրա, առանձնացված է, հետևաբար փոշու և աղմուկի ազդեությունը էական չի լինի:

Նախագծող ընկերության ներկայացուցիչ Սնակ Ասրյանը իր ելույթում մանրամասն ներկայացրեց բնակելի թաղամասի տեխնիկական լուծումները, նշեց մոտակա բնակելի տնից հեռավորությունը, անդրադարձավ կանաչապատման նախագծին:

Ներկաներից մեկը հետաքրքրվեց՝ արդյոք 300 և ավել բնակարանների բնակեցման հետևանքով հնարավո՞ր է նոր դպրոց և մանկապարտեզ կառուցել:

Հ. Ռուբենյանը պատասխանեց, որ համայնքն ունի և՛մանկապարտեզ, և՛ դպրոց, նորը կառուցելու անհրաժեշտություն դեռևս չկա:

Բնակիչներից մեկը հարցրեց, արդյո՞ք գործող ենթակառուցվածքները բավարար են նման թաղամաս կառուցելու համար:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ իրենք դիմել են «Վեոլիա ջուր» ընկերությանը տեխնիկական պայման տրամադրելու համար, իրենք առաջնորդվելու են տեխպայմանով:

Հ. Ռուբենյանն ավելացրեց, որ նախնական հաշվարկներով միացումները կարող են արվել մի քանի կետից:

Ներկաները հետաքրքրվեցին, թե ե՞րբ են նախատեսվում սկսել շինարարական աշխատանքներ, արդյո՞ք պարզ է արդեն բնակարանների արժեքները, և նախատասվում եմ որոշակի զեղչեր տեղի բնակիչների համար:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ կա օրենսդրական որոշակի ընթացակարգ, որն ավարտելուց անմիջապես հետո կսկսեն շին աշխատանքները: Նշեց բնակարանների մոտավոր արժեքները, ասաց, որ դրանք համապատասխանելու են տարածաշրջանում գործող շուկայական արժեքներին: Ավելացրեց, որ տեղի բնակիչների համար զեղչերը կորոշվեն շինաշխատանքները ավարտելուց հետո:

Հ. Ռուբենյանը հավելեց, որ զեղչեր պետք է գործեն միայն համայնքի գրանցված բնակիչների համար:

Բնակիչներից մեկը հարցրեց, արդյոք հնարավո՞ր է իրականացնել որոշակի փոփոխություններ բնակարանը գնելուց հետո:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ ներքին հարդարման հետ կապված փոփոխություններ թույլատրվում է, իսկ արտաքին տեսքի փոփոխությունները արգելվելու են պայմանագրով:

Ներկաները ողջունեցին նախատեսվող գործունեությունը, մի քանիսը ցանկություն հայտնեցին բնակարաններ գնելու համար:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Հ. Ռուբենյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Վորոդ՝
Համայնքի ղեկավար՝ Հ. Ռուբենյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՎԱՐԴԱՆՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի,հիմք ընդունելով 2024 թվականի հուլիսի 31-ին Ակունք համայնքում կայացած հանրային քննարկումների արձանագրությունը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական տարածքում 275-րդ թաղամաս 17 հասցեում«Վարդանյանշին»ՍՊԸ-ի կողմից նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման նախագծի վերաբերյալ:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

31.07.2024

Ակունք

Սույն թվականի հուլիսի 31-ին, ժամը 11.00-ին <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով (առաջին փուլ) Ակունք համայնքի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Ակունք համայնք գ.Նոր Գյուղ 275-րդ թաղամաս 17 հողամաս հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր կառուցելու վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթ ունեցան՝

Բացման խոսքով հանդես եկավ Ակունք վարչական շրջանի ղեկավար Հ.Ռուբենյանը:

Ա.Մինասյան ներկայացրեց նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են մեղմելու, նվազեցնելու և կանխարգելելու հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա: Նշեց որ շինարարության հրապարակը կկազմակերպվի շինարարության կազմակերպման նախագծի պահանջներին համապատասխան: Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքում կիրականացվի կանաչապատման աշխատանքեր համայնքի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի պահանջներին համապատասխան:

Նախագծի ճարտարապետը ներկայացրեց նախատեսվող շենքը՝ դրա տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Մասնակիցները հավանություն հայտնեցին նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Դիտողություններ և առաջարկություններ

Չկան

Հանրային լսումների արդյունքում մասնակիցները որոշեցին՝

- Հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

Վարող և Քննարկումների պատասխանատու Հ.Ռուբենյան _____

Կառուցապատողի ներկայացուցիչ Վ. Վարդանյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 52-Ա

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Ինքնակամ շինությունների օրինականացման նպատակով համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին և սահմանել վաճառքի գին համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ
ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված
Համայնքի ավագանու
02.08.2024թ. թիվ որոշման

Համայնքային սեփականություն ճանաչված անշարժ գույքի օտարումը ինքնակամ շինությունը կառուցողին ուղղակի վաճառքով

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիր	Մակերես / հա /	Նշանակությունը ըստ գործառնական նշանակության	Հողատեսակ	Գործառնական նշանակություն	Հասարակական նշանակության / դրամ/	Գնահատված գին / դրամ/	Կադաստրային գնահատող	Սահմանափակումներ
1	Հողամաս Շենք-շինություն	Ակունք համայնք	07-049-0277-0056-ից	0.2	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների		Գյուղարտադրական	14 140 000	14 140 000	Ժորա Վանոյան	Չկան